

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 02/23.17/[33239]-10

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ  
ԺԱՄԸ 11: 00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան**

**Մասնակցում էին`**

**Խորհրդի անդամներ`**

Վ. Ներսիսյանց	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական (խորհրդի նախագահի տեղակալ)
Ն. Երիցյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Մ. Սարգսյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն (խորհրդի քարտուղար)
Գ. Արզումանյան	«Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Է. Գրիգորյան	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
Զ. Հարությունյան	«Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ս. Մաթևոսյան	«Լիկվոր» դեղագործական ընկերություն» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Ղուկասյան	«Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ

**Հրավիրվածներ`**

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Մ. Մնացականյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Գ. Խաչատրյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Ս. Մնացականյան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ

Ա. Ղարիբյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ռ. Քոչարյան	ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Կ. Բեգլարյան	ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության պետ
Գ. Անանյան	ՀՀ ազգային վիճակագրության ծառայության վիճակագրության պետական խորհրդի անդամ
Ա. Շաբոյան	ՀՀ ազգային վիճակագրության ծառայության վիճակագրության պետական խորհրդի անդամ
Ա. Ղազարյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Ռ. Բեկիրսկա	«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի նախագահ
Ն. Նահապետյան	«Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի անվ. Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն, «Փոքր Հեկ-երի» միության նախագահ
Դ. Աթանեսյան	«Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության նախագահ
Գ. Ավետիքյան	«Ռուսալ Արմենիա» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
Հ. Ամիրզադե	«Դիդաս ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հիմնադիր և բաժնետեր
Ա.Օհանջանյաննամագերդի	«Դիդաս ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ
Ս. Զաքարյան	«Դիդաս ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի աուդիտոր
Ա. Պապիկյան	«Դիդաս ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի իրավաբան
Ս. Ղոնախյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ս. Ոսկանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ
Ռ. Եզանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար

մասնագետ

Հ. Ասլանյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր իրավաբան
Մ. Մելիքյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ
Հ. Տորտիկյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
Օ. Հայրապետյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
Մ. Սարգսյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

1. Գործարարության աջակցման խորհրդի 2009 թվականի ապրիլի 8-ի նիստի N83-150(1) արձանագրության 12-րդ կետի և 2009 թվականի ապրիլի 21-ի նիստի N91-170(2) արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----  
 (Ռ. Հարությունյան, Ս. Կարայան, Ն. Նահապետյան, Դ. Աթանեսյան,  
 Գ. Խաչատրյան, Դ. Սարգսյան, Զ. Հարությունյան, Գ. Արզումանյան,

Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռ.Հարությունյանը** և նշեց, որ Գործարարության աջակցման խորհրդի 2009 թվականին ապրիլի 8-ին և ապրիլի 21-ին կայացած նիստերի N83-150(1) և N91-170(2) արձանագրություններով տրված հանձնարարությունների մեծ մասն ստացել են իրենց լուծումները, իսկ մի մասը դեռևս քննարկման կարիք ունեն:

## **2. Այդ կապակցությամբ`**

1) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանն անդրադարձավ հարկ վճարողի մոտ այլ հարկատեսակների հաշվին գերավճարի գումարը հաշվանցելու դիմումի առկայության պայմաններում, նախքան օրենքով սահմանված կարգով այդ

դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը, դիմումում նշված՝ հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորությունների գանձումից (այդ թվում նաև՝ հարկ վճարողի բանկային հաշիվներին արգելանք դնելու միջոցով) ձեռնպահ մնալու ընթացակարգ մշակելու և ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասում այն ներառելու հարցերին.

2) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռ.Հարությունյանը, «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» ԻԱՄ-ի նախագահ Դ. Աթանեսյանը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանը ներկայացրեցին ավելացված արժեքի հարկի գումարի գերավճարի մնացորդն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու հետ կապված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և «Արմենիա Մարիոթ հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի միջև ծագած խնդրի լուծման մինչ այժմ ձեռք բերված արդյունքները.

3) «Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի անվ. Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն, ՓՀԵԿ-երի միության նախագահ Ն. Նահապետյանը ներկայացրեց փոքր հիդրոէլեկտրակայանների ներդրումային ծրագրերն իրականացնելու ժամանակ պետության կողմից արտոնությունների տրամադրման հարցի լուծման վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանների համար կիրառվող սակագների վերանայման ուղղությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում քննարկումների արդյունքները:

### **3.Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն՝**

1) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի հաղորդումն այն մասին, որ ավելացված արժեքի հարկի գերավճարի գումարը հաշվանցելու դիմումի առկայության պայմաններում, մինչ այդ դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը,

հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորության գանձումից ձեռնպահ մնալու ընթացակարգն արդեն մշակվել և ներառվելու է ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծում.

2) «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունն այն մասին, որ ԳԱԽ-ի նախորդ նիստերում քննարկված հարկային քաղաքականության այն դրույթները, որոնց բովանդակության և կիրարկման ժամկետների վերաբերյալ ձեռք են բերվել վերջնական համաձայնություններ և ներառվել են ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծում, պետք է ընդունել առանձին օրենքներով՝ չսպասելով ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի ամբողջական ընդունմանը.

3) «Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի անվ. Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն, ՓՀԷԿ-երի միության նախագահ Ն. Նահապետյանի հաղորդումն այն մասին, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ քննարկման արդյունքում իր լուծումն է ստանալու նոր կառուցվող ՓՀԷԿ-երի համար օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից փոխհատուցում կամ հարկային արտոնություն տրամադրելու խնդիրը, իսկ ինչ վերաբերվում է սակագնային քաղաքականությանը, ապա դրա վերաբերյալ քննարկումները ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում մտել են եզրափակիչ փուլ.

4) «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ Յ. Գևորգյանի առաջարկած «ապառիկ» եղանակով, հատկապես գյուղական շրջաններում, առևտուր իրականացնելու ժամանակ հաշվիչ դրամարկղային մեքենաների կիրառման և տարաժամկետ վճարումով ապրանքների վաճառքի հետ կապված խնդիրների կարգավորման հարցը գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը տեղափոխելը:

#### **4. Որոշվեց հանձնարարել՝**

1) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին՝

ա. ՀՀ ֆինանսների նախարարության կայք-էջում տեղադրել այս պահի դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի վերջնական տարբերակը, ինչպես նաև այն տրամադրել շահառու գործարար շրջանակներին.

բ. գույքագրել, վեր հանել և ՀՀ վարչապետին ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքի նախագծի այն դրույթները, որոնց բովանդակության և կիրարկման ժամկետների վերաբերյալ կայացվել են վերջնական համաձայնություններ՝ դրանք առանձին օրենքներով ընդունելու նպատակահարմարությունն քննարկելու համար:

2) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ առանձին քննարկման առարկա դարձնել «Արմենիա Մարիոթ հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի ավելացված արժեքի հարկի գերավճարի մնացորդն ընկերության ավելացված արժեքի հարկի և այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման հետ կապված խնդիրները.

3) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռ. Հարությունյանին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանի հետ համատեղ, ընդունելով ի գիտություն, որ մատակարարներին գնորդների կողմից ապրանքները հետ վերադարձնելու ժամանակ ապրանքի գնի վրա ավելացված արժեքի հարկի կիրարկման հետ կապված ծագող խնդիրները կարող են լուծվել ոչ թե առուվաճառքի, այլ կոմիսիոն պայմանագիր կնքելու միջոցով, որտեղ հստակ շարադրված կլինեն կոմիսիոնների և կոմիտենտի փոխհարաբերությունները, հարցի կարգավորման տվյալ եղանակը կիրառելու նպատակահարմարության մասին տեղեկատվությունն իրենց հասանելի բոլոր միջոցներով տարածել շահագրգիռ գործարար շրջանակներում:

2. «Դիդաս Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև ծագած խնդիրների քննարկման մասին

-----  
(Ռ. Հարությունյան, Ա. Օհանջանյաննամագերդի, Հ. Ամիրզադեհ, Գ. Խաչատրյան,

Վ. Ներսիսյանց, Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ** ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ներկայացրեց, որ հարցն ըստ էության գործարարության աջակցման խորհրդի նիստում քննարկելու անհրաժեշտություն չկա և, որ ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ Վ. Ներսիսյանցը ներկայացրել է վեճի հարթման համար «Դիդաս Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից իրականացվելիք հնարավոր քայլերը: «Դիդաս Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հիմնադիր և բաժնետեր Հ. Ամիրզադեհը ներկայացրեց ՀՀ-ում ընկերության գործունեության պատմությունը, ինչպես նաև ապագա ներդրումային ծրագրերը:

**2. Քննարկումներից հետո որոշվեց`** ընդունել ի գիտություն, որ «Դիդաս Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև ծագած վեճը լուծելու համար ընկերությունը կարող է առաջնորդվել ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ Վ. Ներսիսյանցի կողմից առաջարկված 4 կետից բաղկացած գործողությունների ծրագրով:

3. Գրավի առարկաների իրացման ընթացակարգերի բարեփոխման վերաբերյալ  
ՀՀ Բանկերի միության առաջարկությունների քննարկման արդյունքների մասին

-----  
(Ռ. Հարությունյան, Ա. Ղուկասյան, Ե. Չախարյան,  
Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց «Հայաստանի Բանկերի Միություն» ԻԱՄ-ի նախագահ Ա.Ղուկասյանը** և նշեց շարժական գույքի սեփականության պետական գրանցման ինստիտուտի ներդրման հարցի հետ կապված քննարկումների արդյունքները և ձեռքբերումները, մասնավորապես, որ ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 18-ի նիստում լուծվել են ավտոտրանսպորտային միջոցների սեփականության պետական

գրանցման համակարգի ներդրման խնդիրները: Բացի դրանից, նա առաջարկեց կանոնակարգել նաև այլ տեսակի շարժական գույքի նկատմամբ գրավի իրավունքների գրանցման խնդիրները, ինչպես նաև արագ քայլեր ձեռնարկել ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 30-ի N1948 որոշումից բխող գրավի իրավունքի միասնական տեղեկատվական բանկ ստեղծելու ուղղությամբ: Հարցի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե.Զախարյանը ներկայացրեց ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 30-ի N1948 որոշման իրականացման ընթացքը և նշեց, որ ներկա պահին, եթե խնդրին առնչվող մարմինները՝ ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տրանսպորտի և կապի և ՀՀ գյուղատնտեսության նախարարություններն իրականացնեն որոշումից բխող իրենց վերապահված աշխատանքները կադաստրի վարման մասով, ապա ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 2-ամսյա ժամկետում, ներդնելով համապատասխան ծրագրային ապահովում, կստեղծի համապատասխան տեղեկատվական բանկ և շահառուներին կտրամադրի լիարժեք տեղեկատվություն:

## **2. Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել՝**

«Հայաստանի Բանկերի Միություն» ԻԱՄ-ի նախագահ Ա.Ղուկասյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի հետ համատեղ ուսումնասիրել այլ տեսակի շարժական գույքի մասնավորապես, հաստոցների, հոսքագծերի, մեքենասարքավորումների, հումքի և այլնի նկատմամբ գրավի իրավունքի գրանցման միջազգային պրակտիկայում կիրառվող հաջողված փորձը և մոդելներն ու խնդրի հնարավոր կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել ՀՀ վարչապետին:

4. Պետական և կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվությունների կազմի և բովանդակության վերանայման և կրճատման ուղղությամբ 2009 թվականի իրականացվող աշխատանքների ներկա վիճակի Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից արված ուսումնասիրության, եզրակացության և առաջարկությունների քննարկման մասին



(Ռ. Հարությունյան, Ս. Մնացականյան, Ռ. Բեկիրսկա, Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռ.Հարությունյանը** և նշեց պետական և կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվությունների կազմի, բովանդակության վերանայման և կրճատման ուղղությամբ 2009 թվականին իրականացրած աշխատանքների ներկա վիճակի գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից արված ուսումնասիրության արդյունքները և առաջարկությունները:

**2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանն առաջարկեց** պարզել ՀՀ-ում ընդհանրապես վարչական նպատակներով տնտեսությունից հավաքագրվող տեղեկատվական համակարգի արդի վիճակը, դրանց օգտավետության, համադրելիության, կրկնորդությունների, պարբերականության և արդյունավետության տեսանկյունից, որն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ վարչական լիազորություններ ունեցող և վարչական ռեգիստր վարող պետական մարմինները լրացնեն հատուկ այդ նպատակի համար ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից մշակված հարցաթերթիկը և ներկայացնեն համապատասխան վարչական լիազորություն ունեցող պետական մարմին՝ ամփոփելու, համապատասխան վերլուծություն և եզրակացություն կատարելու նպատակով:

### **3. Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել՝**

1) ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝

ա. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից մշակված հարցաթերթիկն ուղարկել վարչական լիազորություն և վարչական ռեգիստր վարող բոլոր պետական մարմիններին՝ դրանք լրացնելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացնելու նպատակով.

բ. ստեղծել աշխատանքային խումբ՝ ամփոփելու վերը նշված մարմինների կողմից ստացված տեղեկատվությունը, վերլուծելու և վերհանելու դրանց օգտավետությունը, համադրելիությունը, կրկնորոշությունները, պարբերականությունը, իչպես նաև մշակելու համապատասխան եզրակացություններ: Ամփոփված տեղեկատվական բազան համադրել նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հավաքագրվող տեղեկատվական բազայի հետ և ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանին ներկայացնել առաջարկություններ հաշվետվությունների կրճատման, պարզեցման, միասնական տեղեկատվական բազայի ստեղծման և տվյալները պետական մարմինների միջև փոխանակելու մեխանիզմ ստեղծելու վերաբերյալ:

2) ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանին՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը հասանելի բոլոր միջոցներով տեղեկացնել հաշվետվություն ներկայացնող կազմակերպություններին, որ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կայք-էջում տեղադրված են հաշվետվությունների էլեկտրոնային ձևաթղթերը և դրանցից օգտվելու կարգը և, որ այսուհետ նրանք կարող են պահանջվող հաշվետվությունները ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

#### **4. Այլ հարցեր**

Լսելով «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» ՀԿ-ի նախագահ Ա. Ղազարյանի առաջարկությունը գործարարության աջակցման խորհրդի նիստերի հրավիրման ժամկետների հետ կապված՝ ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանը տեղեկացրեց, որ այսուհետ գործարարության աջակցման խորհրդի նիստերը կհրավիրվեն ըստ անհրաժեշտության՝ օրակարգային հարցերի ձևավորումից և նախնական քննարկումներից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՌՈՒԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ